ՕՐԷՆՔԸ

ՀՈԳԻՈՎ ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ
ԵՐԿՐՊԱԳԵԼ

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄՈՎՍԷՍԻ ՕՐԷՆՔԸ

ՀՈՎՈՒԵԼ ԵՒ ԱՐԱՇԵԼ
ԳԱՌՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՈՉԽԱՐՆԵՐԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵՂԻԱ

ՀՈԳԻՈՎ ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԵՐԿՐՊԱԳԵԼ

Յով.Դ.23

Ի՞նչ կը նշանակէ "հոգիով" երկրպագել:

Մտովս ու հոգիով պատրաստ ըլլալ անձնանուիրումի երբ պարագաները և դէպքերը պահանջեն: Ոչ միայն գիրով և խօսքով, այլ հոգիով ու մեր բոլոր անձնաւորութեամբ հաւատո՛վ երկրպագել: Հոգին, մարդու ներքին էութիւնը, անոր անհրաժեշտ բաղադրամասն է, կենդանութեան աղբիւրը, անոր անձնաւորութիւնն ու խիղճը՝ գիտակցութիւնը և շարժիչ ուժը:

Դասական հասկացողութեամբ՝ կեանքի սկզբունքը և պատճառը, ինքնին պարզ և աննիւթական գոյացութիւնն է: "Հոգի" բառը կը նշանակէ ու կը յայտնաբանէ այդ անտեսանելի գործօն զօրոյթը, որ կը շարժէ մարդկային, ընկերային, մշակութային, գաղափարական և քաղաքական ընթացքը, ըմբռնումը և կամեցողութիւնը:

Մարդ արարած, մարմին և հոգի, սակայն իրապէս մէկ են:

Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամքին արտայայտութիւնն է: "Հոգի" բառը կ՛ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդհանուր անձնաւորութեան: "Հոգի" նաեւ կ՛ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումը:

Մեր Տէրը Յիսուս Իր երկրաւոր քարոզչական շրջագայութեան ընթացքին տեսաւ համեստ աղքատները, դիտեց հպարտ Փարիսեցիները և իրենք զիրենք աստուածաբան կարծող դպիրները: Անոր աչքերը թափանցեցին մարդկային հոգեկան մտածումներուն, որմէ յետոյ Ան ըսաւ.

«Երանի՛ հոգիով աղքատներուն (խոնարհներուն և իրենքզիրենք աննշան կարծողներուն) **որովհետեւ անո՛նց է երկնքի արքայութիւնը»:**

Ինչո՞ւ, որովհետեւ "հոգիով աղքատը" կ՛ընդունի երբ իրեն հրամցնես որեւէ բան (հանդերձանք ու կարասի), իսկ հոգիով հարուստը կը մերժէ՛, որովհետեւ ան կը կարծէ՛ թէ աւելի լա՛ւը ունի ինք:

Յիսուս, "հոգի" բառը միշտ դրակա՛ն իմաստով գործածեց:

Պօղոս առաքեալ հետեւելով իր Փրկիչին ոտնահետքերուն, կ՛ըսէ.

«Ի վերջոյ, եղբայրներ, խորհեցէք այն բաները՝ որոնք
ճշմարիտ են, պարկեշտ, արդար, մաքուր, սիրելի,
բարեհամբաւ, առաքինի և գովելի»--Փիլիպ. Դ.8:

"Հոգի" բառը նաեւ իր մէջ ունի գուրգուրանքի, սիրե-

լիութեան, մտերմութեան, սիրելու և սիրուած ըլլալու գիտակցութիւնն ու զգացումը: Օրինակ, նոր ամուսնացեալներ յաճախ իրարու "հոգիս" ըսելով կը խօսին: Շատ մը ծնողներ իրենց զաւակները "հոգիս" ըսելով կը շոյեն:

Ուստի, "հոգիո՛վ" երկրպագե՛լ զԱստուած, իր մէջ ունի ու նաեւ կը զգացնէ այդ տպաւորութիւնը, թէ աղօթող ենթական ու Աստուած մտերմութիւն մը ունին իրարու հետ:

Այս մասին անստուեր Լոյս Յիսուս ըսած է.

«Այսուհետեւ հոգ մի՛ ընէք ու մի՛ ըսէք՝ ի՛նչ պիտի ուտենք ի՛նչ պիտի խմենք կամ ինչ պիտի հագնինք: Քանի որ ձեր երկնաւոր Հայրը գիտէ թէ այդ բոլորը պէտք է ձեզի»:

Հետեւաբար հաւատացեալ մը երբ հոգիով կ՛երկրպագէ զԱստուած, ան գիտէ՛ ու վստահ է, որ Աստուծոյ ու իր մտերմութեան պատճառով երկնաւոր Հայրը ուշ կամ կանուխ պիտի պատասխանէ իր աղօթքին: Աստուծոյ՝ մարդ ստեղծելուն իսկակա՛ն նպատակը Իր սիրոյ յարաբերութիւնը տարածել ու բաժնել է Իր նման գիտակից արարածներուն, որովհետեւ Աստուած Իր Հոգիէն ու Սրտէն մասնիկ մը դրոշմած է մեր վրայ: Ուստի "հոգիով" երկրպագութիւնը իմ համեստ կարծիքով, կը նշանակէ Աստուծոյ հետ մտերմութիւն և հաղորդութիւն, սակայն յարգանօք և ակնածանօք որովհետեւ Աստուծոյ մեծութիւնն ու վսեմութիւնը անխորաչափելի է: Մարդկային հոգին, ոչ պակաս մեծութեամբ, երկինք մըն է՝ մտքով, զգացումներով, երեւակայութեամբ և հոգեկան ապրումներով:

Մտերմանա՛նք Աստուծոյ հետ, խօսի՛նք Անոր հետ, սակայն ոչ մանկամտութեամբ, այլ միշտ գիտակցելով Անոր գերազանց վեհութիւնն ու արբայական արարչագործութիւնը: Առանց հաւատքի և հոգիի լոյսին, մտքի լոյսը սեգ ու հպարտ, ամբարտաւան, պատուհաս ու անէծք է աշխարհի:

ՏԷՐ ՏՈՒՐ ԻՆՁ ԱՅՆ ՀՈԳԻՆ

Տէր տուր ինձ այն հոգին
Որով Հայր Աստծուն հնազանդեցիր
Տէր տուր ինձ այն հոգին
Որով դէպի խաչ Դու գնացիր:
Ես ինչպէս անեմ, որ բեզ նմանիմ
Ով Յիսուս Քրիստոս իմ Տէր
Սուրբ խօսքովդ մաքրիր իմ հոգին
Ով Յիսուս Քրիստոս իմ Տէր:
Տէր տուր ինձ այն հոգին
Որով հոգիներ Դու շահեցիր

Տէր տուր ինձ այն հոգին
Որով աշխարհի Դու յաղթեցիր։
Տէր տուր ինձ այն հոգին
Որով մեղաւորը սիրեցիր
Տէր տուր ինձ այն հոգին
Որով մարդկութեանը ներեցիր։
Ուստի ամէն ինչ որ կամենում էք
Թէ ձեզ անեն մարդիկ
Այնպէս ալ դուք առէք նրանց
Այնպէս ալ դուք առէք նրանց։
--Ց. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ի՞նչ կը նշանակէ "ճշմարտութեամբ" երկրպագել։

Թէ՛ հրեաները և թէ՛ հեթանոսները կ՛երկրպագէին իրենց Աստուծոյն, բայց ո՛չ ճշմարտութեամբ, այլ անգիտութեամբ և վախով։ Ինչո՞ւ, որովհետեւ մարդկային անճնաւորութիւնը (մարգարէներ), որմա՛ն ալ ներշնչուի աստուածային Հոգիով, երբ փոխանճուի ուրիշներու, կ՛այլասէրի ու կը փոխուի իր հարազատութիւնը։ Սոյն պատճառով Յովհաննէս առաքեալ կը վկայէ Մովսէս մարգարէի համար ըսելով.

«Օրէնքը Մովսէսի միջոցով, իսկ շնորհն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով եղան»--Յով. Ա.17։

Հողաշէն մարդ արարածը չէր կրնար ճանչնալ զԱստուած որմա՛ն ալ Աստուծոյ հոգին զայն ներշնչէր, որովհետեւ մարդ էակ չէր տեսած զԱստուած, որ կարենայ ըմբռնել աստուածային սէրը, շնորհը ու ճշմարտութիւնը։ Մարդկութիւնը կարիքը ունէր տեսնել ու շօշափել Անտեսանելիին և Աննիւթականը՝ Սէրը և Ճշմարտութիւնը մարմնապէս։ Այսինքն մարդկային ապրումի՛ մէջ, ուստի Աստուածորդի Յիսուս մարմնացաւ ու «եղաւ մարմին»։ Ո՛չ թէ երեւոյթով կամ իմաստասիրական տեսութեամբ, այլ իսկապէս և իրապէս։

«Մարդեղացեալ Յիսուս, իր իսկ ստեղծած աշխարհը եկաւ, սակայն աշխարհը զինք չճանչցաւ։ Իր իսկ ստեղծած մարդիկը չընդունեցին զինք»--Յով. Ա.10-11։

Հրեաները Աստուծոյ պահանջները ծիսականացուցած, մակերեսացուցած և ձեւականացուցած էին։ Քարացած համոզումները աւելի վտանգաւոր են ճշմարտութեան հանդէպ, քան սուտերը։

Կեանքի բոլոր ոլորտները թափանցող Յիսուս կ՛ըսէ.

«Մարմնին ճրագը աչքն է. երբ աչքը առողջ է՝ ամբողջ մարմինը լուսաւոր կ՛ըլլայ, իսկ երբ աչքը չար է՝ (նախապաշարեալ), մարմինն ալ խաւար կ՛ըլլայ»--Ղուկ. ԺԱ.34։

Բարոյական ոչ մէկ ախտանիշ չի կրնար համեմատուիլ այն

ժխտական տարրին հետ, որ կը կոչուի նախապաշարում:

Աստուածաճանաչումը հաւատի ուժն է, նախապաշարումի և նիւթապաշտ ագահութեան դէմ: Կարելիութիւն կա՞յ արդեօք, որ մարդիկ յարութիւն առնեն իրենց նախապաշարումներէն ու մտացածին երեւակայութիւններէն, տեսնելու համար կեանքի դրական ու հաւատքի հրաշագեղ զօրութիւնը: Իսկութեան մէջ և պատմականօրէն կայ: Փարիսեցիք թէեւ ականատես եղան Յիսուսի հրաշքներուն, իմացան Անոր աստուածապատգան բարոզութիւնները և հիացան Անոր ծիածանի նման լուսաճաճանչ և լուսայորդ Անճնաւորութեան, սակայն իրենց սիրտին մէջ նախանձեցան, ատեցին Զինք ու մատնեցին խաչի մահուան:

Մօտ հինգ տարի յետոյ Փարիսեցի Սողոս, Դամասկոսի ճամբուն վրայ երբ ականատես եղաւ լուսեղէն Յիսուս Քրիստոսի, ան դարձաւ անմրցելի առաքեալ բարոզիչ վկան ու բաջամարտիկ նահատակը Յիսուս Քրիստոսի:

Ուստի մենք եւս արթննա՛նք մեր նախապաշարումներէ, նիւթապաշտ և ատելավառ ըմբռնումներէ ու տեսնենք սիրոյ ու հաշտութեան իրագործումները:

Քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ վերանորոգուիլ Աւետարանի ճշմարտութեամբ: Աստուծոյ նմանելու գաղտնիքը՝ Սէրն է, գերմարդկայինը, ճշմարտութեան ճամբան: Կեանքի և հոգիի կնճռոտ հարցերուն դիմաց միայն ճշմարտութիւնն է որ կը փրկէ կացութիւնը, Յիսուս, Զայննէ ճշմարտութեան--մեկուսացած, ծածկուած, հակադիր ուժերուն: Բիւրեղացած է Քրիստոս, զտուած աստուածային սիրոյ և ճշմարտութեան բովի մէջ: Ան վկայեց ինքզինքին համար ըսելով.

«Ես եմ ճանապարհը և ճշմարտութիւնը և Կեանքը» -Յով. ԺԴ.6:

«Ես ծնած և աշխարհ եկած եմ մէկ բանի համար, որպէսզի վկայեմ ճշմարտութեան»--ըսաւ Յիսուս Պիղատոսին:

Իսկ անոնք որ ընդունեցին զայն՝ (հրեաներ ու հեթանոսներ) իշխանութիւն տուաւ անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան, կ՛անսան ու կը վստահին Իր Անունին՝ ճշմարտութեան: Յիսուս Իր խօսակցութեան ընթացքին յայտարարեց Սամարուհիին, ըսելով.

«Դուք երկրպագութիւն կ՛ընէք անոր զոր չէք ճանչնար, իսկ մենք երկրպագութիւն կ՛ընենք Անոր զոր կը ճանչնանք»--Յով. Դ.22:

Խաչակիրներ, հոգիով ու խանդավառութեամբ գացին վերագրաւելու Երուսաղէմը, անոնք գրաւեցին Երուսաղէմը 1099-ին և մզկիթը վերածեցին եկեղեցիի 88 տարիներու համար: Խաչակիր իշխանութիւնները փոխանակ միացեալ իշխանութիւն կազմելու

երուսաղէմէն մինչեւ Եդեսեա, իրենց յափշտակած հողամասերը վերածեցին բաժան բաժան փոխրիկ և անջատ դխութիւններու, երբեմն նոյնիսկ իրարու հակադիր:

Խաչակիրներու արկածախնդրութեան հետեւանքը եղաւ ամօթալի պարտութիւն, պատմական թշնամութիւն և վրէժխնդրութիւն:

Ինչո՞ւ:

Որովհետեւ Խաչակիրներ չգացին սիրոյ հոգիով ոչ ալ ճշմարտութեամբ, այլ անոնք գացին գրաւելու Բիւզանդական հողերը և ջարդելու իրենց թշնամիները: Մինչդեռ անսպառ Ընորհ Յիսուս ըսած էր.

«Ճմարիտ երկրպագուները հոգիով և ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը՝ որովհետեւ Հայրն ալ կ՛ուզէ որ իր երկրպագուները այդպիսին ըլլան: Հոգի է Աստուած, և անոր երկրպագուները պէտք է հոգիով և ճշմարտութեամբ զայն պաշտեն»: --Յով. Դ.23-24:

Երկու հազար տարի հետիոտն հոգնած, Յիսուս նստած է աշխարհի իւրաքանչիւր խաչմերուկի ջրհորին: Անոր աղաղակող ձայնը յաւիտենական լռութեան խորէն և բան դարերու ժխորին մէջէն Յիսուս կը խօսի մեզմէ իւրաքանչիւրին հետ: Արդեօք ոսկիի սահմռկեցուցիչ ձայնն է որ կը լսուի ամենուրէք, թէ Յիսուսի մելանուշ «եկէք Ինծին»: Մեզմէ քանինե՞ր կը լսեն ու կը հաւանին Յիսուս Քրիստոսի:

Չեն բաւեր գաղափարներ, անհրաժեշտ է Աստուծոյ ձայնը: Ջութակը կրնայ տեսանելի ըլլալ, բայց անոր ձայնը ո՛չ... :

Նոյնպէս Յիսուս չտեսնուիր մարմնական աչքով, սակայն Անոր ձայնը կը լսենք մեր խիղճին ականջով: Այդ անուշ ղօղանջը իմացական զանգին, Աստուծո՛յ ձայնն է: Ակա՛նջ դիր ու լսէ՛ թէ ի՞նչ կ՛ըսէ Աստուած ըեզի: Յիսուս Իր յուսադրող ձայնով պատասխանեց Մարթայի, ըսելով.

«Քեզի չըսի՞, որ եթէ հաւատաս,
Աստուծոյ փառքը պիտի տեսնես»:

Յիսուս կը դիմաւորէ մեզ, Իր կենսախրախոյս նայուածքով ու կ՛ըսէ. «Որդիակ, յուսահատութեանդ և թերահաւատութեանդ գերեզմանին բարը մեկդի ըրէ»:

Քրիստոսի մելանուշ ձայնը «եկէք Ինծի»ն է, որ կը հնչէ մեղմ ու բաղցր: Այդ ձայնը հաղորդական և գրաւիչ ուժ մը ունի, նորոգելու մեղաւորներուն տառապալից կեանքը և սփոփելու համար տանջուած սիրտերը:

Փետրուար 20, 2000
Թորոնթօ

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄՈՎՍԷՍԻ ՕՐԷՆՔԸ

1. Լերան քարոզի սկզբնատրութեան, Յիսուս կ՛ազդարարէ թէ օրէնքը պարտ է ըմբռնել Նոր Ուխտի շնորհիւով:

Յիսուս ըսաւ.

«Մի՛ կարծէք թէ եկայ Մովսէսի Օրէնքը կամ մարգարէներու ուսուցումները ջնջելու. չեկայ ջնջելու, այլ ամբողջացնելու: Հաստատ գիտցէք, որ բոլոր Օրէնքն ու մարգարէութիւնները կէտ առ կէտ պիտի իրականանան՝ առանց բառ մը իսկ դուրս ձգելու, մինչեւ գայ այն օրը, երբ այս երկինքն ու երկիրը պիտի անցնին»--Մատթ. Ե.17-19:

2. Յիսուս միակ Անձն էր որ կրցաւ պահել Օրէնքը իր ամբողջութեամբ --Մատթ. Ե.19, Յով. Ը.46:

3. Օրէնքը պահուելու էր կամ ամբողջութեամբ կամ երբեք--Յակ. Բ.10

4. Յիսուսի անձին մէջ Աստուծոյ խօսքը (օրէնքը) կրկնուեցաւ ոչ թէ Սինայ լերան վրայ, այլ Երանելիներո՛ւ լերան վրայ:

5. Յիսուս չի ջնջեց Օրէնքը, այլ տուաւ անոր գերագոյն մեկնաբանութիւնը ու ճշմարտապէս իրագործեց զայն:

Պօղոս առաբեալի վկայութիւնը.

«ԵԹԷ բոլոր մարգարէութիւնները գիտնամ ու լեզուները խօսիմ բայց սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եմ»:

Անառակ Որդւոյն մեծ եղբայրը բոլոր օրէնքը պահեց, բայց սէր չուներ, ուստի ուրախութեան հանդիսութեան մէջ բաժին չունեցաւ:

Յիսուս Քրիստոս կենդանացո՛ւց մարգարէութիւնները, ապրեցաւ անոնց բացատրութիւնները և յստակացուց երկնաւոր Հօր սէրն ու ողորմութիւնը աշխարհամարդուն:

«Անոնք (Հին Կտակարանին մարգարէները) այն ճրագն էն՝որ մութ տեղը լոյս կու տայ, մինչեւ բացուի այն օրուան արշալոյսը և Առաւօտեան Աստղը ծագի ձեր սիրտերուն մէջ»--Բ. Պետ. Ա.19:

Հին Ուխտը կատարած էր իր դերը, իր հաւատին արծաթ թելերով (մարգարէներով), դարերու ընդմէջէն, վտարանդի մարդկութեան բաղդը բերել կապել փրկութեան ոսկեղէն Վէմին՝ Յիսուս Քրիստոսին:

«Մեզ արժանի ըրաւ ըլլալու ծառաները նոր Ուխտին, որ

կապուած չէ՛ գրաւոր Օրէնքին, այլ՝ Սուրբ Հոգիին. որովհետեւ գրաւոր Օրէնքը մահուան կ՛առաջնորդէ, մինչդեռ Հոգին կեանք կու տայ»--Պօղոս առաքեալ--Բ.Կոր. Գ.6

«Մինչեւ այսօր, ե՛րբ որ ալ Մովսէսի գիրքերը կը կարդան՝ նոյն ծողը վարագոյրի պէս կը փակէ անոնց միտքերը: Բայց երբ Տիրոջ դառնան՝ ծողը կը վերցուի. քանզի Տիրոջ դառնալ՝ կը նշանակէ հոգին ունենալ, և ուր որ Տիրոջ Հոգին ներկայ է՝ հոն ազատութիւն է»--Բ. Կորնթ. Գ.15-17:

Որովհետեւ Քրիստոս է վճռական գործակատարը հաւատքին ու ո՛չ Օրէնքը:

Յիսուսի համայնքը՝ եկեղեցին, ուխտի՛ մը հաւաքականութիւնն էր և ունէր պատմական արմատներ և հրաշագործ մարգարէներ: Իսրայէլի այս մասնայատկութիւնը նշան էր թէ Իսրայէլ ծառայութիւն մը ունէր կատարելիք համայն մարդկութեան ու կատարեց Քրիստոսով: Մարգարէները ջանացին պատգամել Աստուծոյ պատուէրները, ոչ թէ յայտնաբանել զԱստուած:

Պետրոս առաքեալ կ՛ըսէ.

«Այս փրկութիւնն էր որ փնտռեցին և փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի տրուելիք շնորհքին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ՝ թէ ի՛նչ ժամանակ և ի՛նչ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի Հոգին»: --Ա. Պետ. Ա.10-11:

«Աստուած չյայտնեց մարդկութեան նախորդ սերունդներուն այնպէս՝ ինչպէս հիմա Սուրբ Հոգիին միջոցաւ յայտնեց Իր սուրբ առաքեալներուն»--Եփես. Գ.5:

«Ոչ ոք երբեք տեսած է զԱստուած, բացի միայն Միածին Որդին, որ Հօրը ծոցն է. Ա՛ն յայտնեց»--Յով. Ա.18

Պօղոս առաքեալ իր ուսուցումներուն մէջ, կ՛ըսէ.

«Ես եկեղեցիին ծառայ եղայ՝ իբրեւ Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւն, որպէսզի իր ամբողջութեանը մէջ ձեզի Աստուծոյ խոսքը բարոզեմ այն ծրագիրը՝ (խորհուրդը) որ Աստուած անցեալ բոլոր դարերուն մարդկութեան բոլոր սերունդներէն ծածուկ պահած էր, և որ հիմա յայտնեց իր ընտրեալներուն:

Աստուած ուզեց անոնց ցոյց տալ՝ թէ ի՛նչ հարուստ ու փառաւոր է իր ծրագիրը, որ կը վերաբերի բոլոր ազգերուն. և այդ ծրագիրն է՝ Քրիստոսը ճանչցնել ձեզի, գալիք փառքին յոյսով» --Կողոս. Ա. 25-27:

Քրիստոնեայ հաւատքի պատկանելիութիւնը, Աստուծոյ Մարմընաւորեալ յայտնութեան ճանաչումի փորձառակա՛ն գիտակցութիւնն է:

Նոր Կտակարանին մէջ այս բառերը երեք գլխաւոր իմաստներով կը գործածուին.

1. Աստուծոյ՝ Ինքզինք ճանչցնելու կամ Իր կամքն ու ծրագիրը մարդուն յայտնելու արարքը--Մատ. ԺԶ.17, Հռոմ. ԺԶ.25, Ա Կորն. ԺԲ.1:

2. Այն արարքը, որով Աստուած ոեւէ մէկուն կը յայտնէ Աւետարանը և առաքելական այն պաշտօնը՝ որուն կը կոչուի ինք--Գաղ. Ա.12, Եփ. Գ.3, Ա. Կորնթ. ԺԵ.3:

3. Այն փառաւոր երեւումը, որ Քրիստոս պիտի ունենայ իր երկրորդ Գալուստին--Հռոմ Բ.5, Ա. Կորնթ. Ա.7, Բ. Թես. Ա.7:

Աստուածաշունչը աստուածային ինքնաբացայայտումի աստիճանակա՛ն զօրազերծումն է: Աստուծոյ պահանջները կը յառաջանան, օրինականէն դէպի բարոյականը, և բարոյականէն դէպի հոգեւորը: Աստուած յայտնութիւն մըն է որ կը ծագի մարդկային սիրտին երկնակամարին վրայ ու կը լուսաւորէ միտքը:

«Մեծ է Աստուածապաշտութեան խորհուրդը՝ որ երեւցաւ մարմինով, արդարացաւ հոգիով, յայտնուեցաւ հրեշտակներուն, քարոզուեցաւ հեթանոսներուն մէջ, հաւատալի եղաւ աշխարհի մէջ և վերացաւ փառքով»--Ա Տիմ. Գ.16:

> Պօղոս առաքեալ կը խոստովանի ու կը վկայէ, ըսելով. «Բենիամինի ցեղէն, զտարիւն եբրայեցի և օրինապահ փարիսեցի: Ա՛յնքան նախանձախնդիր էի որ Քրիստոսի եկեղեցին կը հալածէի. և արդար էի այնքան՝ որքան Օրէնքին անթերի գործադրութիւնը կրնար տալ: Սակայն այս բոլորը, որ ժամանակ մը առաւելութիւն կը սեպէի, հիմա վնաս կը համարեմ՝ Քրիստոսի սիրոյն համար»--Փիլիպ. Գ.5-11:

«Իմ արդարութիւնս այլեւս Օրէնքի գործադրութենէն չի գար, այլ՝ Քրիստոսի հանդէպ ունեցած հաւատքէս:...Հիմա միակ փափաքս է՝ ճանչնալ Քրիստոսը, անոր Յարութեան զօրութիւնը, և անոր չարչարանքներուն մասնակից դառնալ»--Փիլիպ. Գ.10:

Քրիստոս է վճռական ու վերջնական գործակատարը հաւատքին ու ո՛չ Օրէնքը: Քրիստոնէական կեդրոնական պահանջը՝ հաւա՛տալ ու վստահի՛լ է Յիսուս Քրիստոսի, ո՛չ մարդկային օրէնքներու: Պօղոս առաքեալ կը յայտնէ, թէ քրիստոնէական կեանքի ընթացքը պէտք է ըլլայ Սուրբ Հոգիին պարգեւած ազատութեամբը ապրուած կեանք և սիրոյ արտայայտութիւն, որ կու գայ Քրիստոսի հանդէպ մեր ունեցած հաւատքէն և սէրէն: Ան կը շարունակէ ու կ՛ըսէ.

«Ոեւէ մարդ չ՛արդարանար Օրէնքը գործադրելով, այլ միայն Յիսուս Քրիստոսի հաւատալով»--Գաղ. Բ.16:

«Սուրբ Հոգիով նոր կեանք սկսելէ ետք այժմ Օրէնքին պահանջքներո՞ւն կը վերադառնաք»--Գաղ. Գ.3:

«Անոնք որ Օրէնքի գործադրութեան կ՛ապաւինին՝ անէծքի ենթակայ են»--Գաղա. Գ.10:

«Քրիստոս Օրէնքի այդ անէծքէն մեզ ազատեց, Ինք մեր տեղը անէծքի առարկայ դառնալով»--Գաղ.Գ.13:

«Օրէնքը մեր խնամակալ դաստիարակը եղաւ, մեզ Քրիստոսի առաջնորդելով, որպէսզի հաւատքով արդարանանք: Բայց հիմա որ հաւատքը եկաւ, այլեւս դաստիարակի պէտք չունինք»--Գաղ. Գ.23:

«Կարեւորութիւն մի՛ տաք անոնց՝ որոնք ձեզ կը բննադատեն, թէ ինչո՛ւ չէք պահեր ուտելու և խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու և Շաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն են, իսկ իրականութիւնը Քրիստոսի՛ մէջ է»--Կող. Բ. 16-17

Քրիստոս մեզ ազատ ըրաւ.

«Քանդելով զանոնք բաժնող թշնամութեան պատը, և խափանելով Մովսիսական Օրէնքը իր պատուիրաններով ու հրահանգներով, որպէսզի Հրեան ու հեթանոսը իր անձին մէջ միաւորելով՝ ստեղծէ նոր և միակ ժողովուրդ մը, և այսպիսով խաղաղութիւն հաստատէ» --Եփես. Բ.14-15:

«Օրէնքը Մովսէսի միջոցաւ տրուեցաւ, մինչ շնորհքն ու ճշմարտութիւնը Յիսուս Քրիստոսի՛ միջոցաւ»--Յով. Ա.17:

Հրեաները «Արդարանալու իրենց հասկցած ձեւին կառչեցան և ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին: Մինչդեռ Քրիստոսով Օրէնքը իր վախճանին հասած է և միայն Քրիստոսի հաւատացողը կ՛արդարանայ»-- Հռոմ. Ժ.2-4:

«Բացայայտ է, թէ նախկին պատուիրանը մէկդի կը դրուի, անզօր և անօգուտ ըլլալուն համար, որովհետեւ Օրէնքը չկրցաւ ոեւէ բան կատարելութեան հասցնել. և հիմա մեզի տրուեցաւ աւելի լաւ յոյս մը, որով Աստուծոյ կը մօտենանք»--Եբր. Է.18-19:

«Այսպէս, Յիսուս գերազանց ուխտի մը երաշխաւորը եղաւ» --Եբր. Է.22:

«Եթէ առաջին Ուխտը անթերի ըլլար, Երկրորդ մը պէտք պիտի չըլլար: Բայց Աստուած...կ՛ըսէ. "Ահաւասիկ կը մօտենան օրերը, կ՛ըսէ Տէրը, երբ նոր ուխտ մը պիտի կնքեմ...:

Արդ, հետեւեալն է Ուխտը, որ Իսրայէլի հետ պիտի կնքեմ գալիք օրերուն, իրենց միտքերուն մէջ պիտի դրոշմեմ իմ օրէնքներս, իրենց սիրտերուն վրայ պիտի գրեմ զանոնք. Ես իրենց Աստուածը պիտի ըլլամ, և իրենք՝ Իմ ժողովուրդս: Արդ, Նոր Ուխտի մը մասին խօսելով՝ այլեւս հինցած կը նկատէ առաջինը, իսկ ինչ որ հինցած է ու ժամանակավրէպ՝ կ՛անհետանայ»--Եբր. Ը.7, 10,13:

«Մովսիսական Օրէնքը պարզապէս գալիք նոր կարգերուն շուքը, այսինքն՝ մօտաւոր նմանութիւնը միայն կը ներկայացնէ և ո՛չ թէ անոր հարազատ պատկերը»--Եբր. Ժ.1:

Յիսուս չի ջնջեց Օրէնքը, այլ տուաւ անոր գերագոյն մեկնաբանութիւնը ու ճշմարտապէս իրագործեց զայն:

Ճամբորդին մէկը կառքի մը մէջ նստած իր ճամբորդութեան պայուսակը ծունկերուն վրայ կը կրէ, որպէսզի յաւելեալ վճառում չընէ: Հրեայ Քրիստոնեաներուն, Օրէնքի պահպանումն ալ նման է վերոյիշեալ ճամբորդին, որովհետեւ մահեն դէպի յաւիտենական կեանքը մեր ճամբորդութեան բոլո՛ր վճարումները, մեր Յիսուս Փրկիչը կատարեց Իր Մարդեղացումով:

Պօղոս առաբեալ ամենայն համբերութեամբ ու սիրով կը ջանայ համոզել իր հրեայ արենակիցները, Քրիստոսի կատարած ամբողջակա՛ն փրկութեան: Ու երբ չգտներ համապատասխան հասկացողութիւն, կը պարտադրուի գրել Փիլիպպեցւոյ Եկեղեցիին, ըսելով.

«Զգուշացէք այն մարդոցմէ, այն շուներէն, որոնք չարիք կը սերմանեն՝ ստիպելով որ թլփատուիք: Իսկական թլփատուածները մե՛նք ենք, որովհետեւ Աստուծոյ հոգիով լեցուած պաշտամունք կը կատարենք և միայն Քրիստոս Յիսուսի միացած ըլլալով կը պարծենանք, և ո՛չ թէ Օրէնքին գործադրութեամբ կամ Աբրահամի մարմնաւոր զաւակը ըլլալով»--Փիլիպ. Գ.2-3:

Մարդեղացեալ Յիսուս մրցակից Աստուած մը չէ արհոզեց: Ան մի միայն հարոզեց "Հայր Երկնաւոր" Աստուածը առանց բաղդատութեան դնելու ուրիշ ազգերու աստուածներուն:

1. Ան խաւարին մէջ մոմ մը վառեց, խաչակրութիւն չըրաւ, վայրագութեան չդիմեց:

2. Աստուածային լոյսով խաւարը հեռացուց և փարատեց:

Պօղոս առաբեալ իր վերջին հաւատքի աւանդը կը յանձնէ Տիմոթէոսի ու Տիտոս երիտասարդ բարեկամներուն, ըսելով.

«Գերագոյն պատուիրանը սէրն է. անարատ սրտէ, մաքուր խղճմտանքէ և անկեղծ հաւատքէն բղխած սէրը»--Ա. Տիմ. Ա.5:

Շատեր այս պատուէրները մոռցած դատարկ վիճաբանութեանց

մէջ մտնելով մեզի Օրէնք տրվեցնելու ելեր են, մինչդեռ ո՛չ իրենց խօսածը գիտեն, ո՛չ ալ Աստուծոյ Օրէնքը, որուն մասին այնքան վստահութեամբ կը ճառեն»--Ա. Տիմ. Ա.6:

«Որդեա՛կս, Տիմոթէոս, հետեւեալ պատուէրը կ՛աւանդեմ քեզի, որ սկիզբէն քեզի համար եղած մարգարէական պատգամները միտքդ չհանես, այլ անոնցմով զինուիս և բարի զինուորութիւն ընես, հաւատոք և խիղճդ մաքուր պահելով»--Ա. Տիմ. Ա.18

«Մէ՛կ Աստուած կայ միայն, և Աստուծոյ ու մարդոց միջեւ միակ Միջնորդ մը՝ Յիսուս Քրիստոս փրկիչը, որ ինքզինքը իբրեւ փրկագին տուաւ բոլոր մարդոց համար»--Ա. Տիմո. Բ.5:

Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ փոխակերպելու Աստուծոյ կարծեցեալ "վախ"ը՝ աստուածային սիրով՝ "Մի՛ վախնաք"ով: Մարդ մինչեւ որ իր սեւեռակէտը չփոխէ, զԱստուած բռնատէր պիտի կարծէ, մինչդեռ Աստուած վեհափառօրէն սիրո՛յ Հայրութիւնն է:

«Անցեալին բազմաթիւ անգամներ և բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ Իր Որդիին միջոցաւ»--Եբր. Ա.1-2:

Մովսէսի և Յեսուի Աստուածը, պատերազմի՛ Աստուածն էր:
Յեսու Ե. 4-6, 13-14
Զ. 18-19, 24, 21-23
Է. 24
Ա. Թագ. ԺԱ. 1-20

Հին Կտակարանի մարգարէները չհասկցան իրենց մարգարէութեան պատգամը:

Յիսուսի «Այս փրկութիւնն էր որ փնտռեցին և փորձեցին հասկնալ մարգարէները, որոնք ձեզի տրուելիք շնորհին մասին մարգարէանալով՝ կը փորձէին հասկնալ՝ թէ ի՛նչ ժամանակ և ի՞նչ պարագաներ կը ծանուցանէր իրենց մէջ գործող Քրիստոսի հոգին, որ կանուխէն կը վկայէր Քրիստոսի չարչարանքներուն և անոնց յաղորդելիք փառքին մասին»--Ա. Պետ. Ա.10-11:

Պօղոս առաքեալ կատարտէ իր իմաստալից բնաբան խօսք ըսելով.

«Աւետարանը յայտնութիւնն է Աստուծոյ փրկութեան ծրագրին, որ անցեալ բոլոր ժամանակներուն մէջ ծածուկ մնացած էր: Այժմ այդ խորհուրդը, մարգարէական գրութիւններով յայտնուեցաւ»
--Հռոմ. ԺՋ.25-26:

Նոյեմբեր 6, 2002
Թորոնթօ

ՀՈՎՈՒԵԼ ԵՒ ԱՐԱԾԵԼ ԳԱՌՆՈՒԿՆԵՐՆ ՈՒ ՈՉԽԱՐՆԵՐԸ

Ի՞նչ կը նշանակէ հովուել:

Հովուել կը նշանակէ արածել ու պահպանել իրեն յանձնուած ոչխարները: Բարի հովիւը կ՛արածէ իր ոչխարները սրինգի մը գեղգեղանմովն ու ո՛չ շուներու հաջիւնովը:

Յիսուս նաւակէն դուրս ելլելով՝ մեծ բազմութիւն մը տեսաւ ու գթաց անոնց վրայ, որովհետեւ անոնք նման էին ոչխարներու, որ հովիւ չունին. և սկսաւ շատ բաներ ուսուցանել անոնց:
--Մարկ. Զ. 34:

Լաւ հովիւ մը կը ճանչնայ իր հօտին իւրաքանչիւր ոչխարը:

Յիսուս Քրիստոս, իր հոգեպարար սիրով կ՛արտայայտէ, մարդասիրական հովուութիւնը, ըսելով.

Հրէաստանի մէջ հարիւրաւոր Դպիրներ, Փարիսեցիներ ու Սինակոկներ ըլլալով հանդերձ, ինչո՞ւ ժողովուրդը նման էր ոչխարներու, որոնք հովիւ չունէին. ըստ մեր Տիրոջ Յիսուսի խօսքին:

Միթէ զարմանալի չէ՞: Ո՞ւր էին պաշտօնական կղերները և ի՞նչ կ՛ընէին հոգեւորականները: Մեր Փրկիչը Յիսուս կը ջանայ նկարագրել ճշմարիտ հովիւի մը պատկերացումը, ըսելով.

«Ես եմ բարի Հովիւը. բարի Հովիւը Իր կեանքը կու տայ ոչխարներուն համար: Իսկ վարձկանը, որ Հովիւ չէ, և ոչխարներն ալ իրենը չեն, երբ կը տեսնէ որ գայլը կու գայ՝ կը լքէ ոչխարները և կը փախչի...: Ես եմ բարի Հովիւը. կը ճանչնամ ոչխարներս և անոնք ալ զիս կը ճանչնան: Այնպէս՝ ինչպէս Հայրը Զիս կը ճանչնայ և ես Հայրը:... և Իմ կեանքս կու տամ Իմ ոչխարներուս համար»--Յով. Ժ.11-14:

Այսօր եկեղեցիները, իրենց կեանքը տալու փաջ հովիւներու կարիքը ունին:

Հովիւները՝ բնութեան աննենգ զաւակներն են: Ժողովուրդը հովուելու և զայն սրբակերտելու և ուսուցանելու պատասխանատուութիւնը յանձնուած է եկեղեցիներու հովիւներուն:

Առանց պատասխանատուութեան պարտականութիւն՝ իրաւունք չկայ, առանց գործունէութեան վարձատրութիւն չկայ, և առանց ճիգի՝ հոգեկան վայելք չի կրնար ըլլալ:

Չի բաւեր որ մենք զմեզ քրիստոնեայ կոչենք. պէտք է գիտնա՛նք թէ ինչո՛ւ քրիստոնեայ ենք, ի՛նչ է Քրիստոսի հաւատալու մեր նպատակը: Ո՞ւր է ժողովուրդին մէջ մեր արժանաւոր տեղը, ծառայութի՞ւն, թէ փառամոլութիւն: Պատասխանատուութենէ խու-

սափումի ճամբան՝ անտարբերութիւնն է: Եկեղեցականներ շատ աւելի լրջօրէն կրելու են պատասխանատուութիւն մը՝ ման բժիշկը, փաստաբանը և կամ ուսուցիչը:

Արարիչի և արարածի միջեւ անմակտելի կապը՝ փոխադարձ արժետրումը՝ Աստուծոյ Արարիչ ըլլալու հանգամանքով է, իսկ մարդն ալ աստուածանման արարած մը հանդիսանալու իր անկապտելի շնորհով: Մարդ արարածի աստուածանմանութիւնը իրական կրնայ դառնալ, որովհետեւ այդ տրուած ընծան՝ աստուածային գերագոյն շնորհ մըն է: Բանաւոր արարածը փնտուած է իր Արարիչը և Անկէ հեռու խաղաղութիւն ու հանգիստ չէ գտած:

Աստուած Ինքզինք մարդուն կը բացայայտէ որպէս՝ «Ես եմ Որ Էն», այսինքն՝ ի տարբերութիւն կուռերու և ձեռակերտ աստուածներու:

Եկեղեցին (Հովուապետը ներկայացնողներ) աշխարհի մէջ գոյ է վկայելու համար, նոր ընթացքով, Քրիստոսի գալուստով, մահուամբ և յարութեամբ թէ իրե՛նք Նոր Արարած մը եղած են:

1. Այս նորութեամբ իրենք պարտ են ապրի՛լ:
2. Ցոյց տալու ե՛ն իրենց նոր ապրումը:
3. Այս նորութեան կնիքը իրենց կեանքին վրայ կրելու են:

Ի՞նչ կը նշանակէ արածել հօտը:

Յիսուս՝ առաջնորդելու պաշտօն տուաւ, Պետրոս առաքեալին:

Կարդանք ճանչնալու համար թէ Պետրոս ինչպէ՞ս կը բացատրէ արածելու իր պատասխանատուութիւնը, ան կ՛ըսէ եկեղեցւոյ երէցներուն.

«Որպէս երիցակից մը՝ որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն և ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ՛աղաչեմ ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ՝ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ՛ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ՝ յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց պարտադրելով ձեր անձերը, այլ՝ օրինակ ըլլալով ձեր հօտին, որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք»--Ա. Պետ. Ե.1-4:

Իմաստուն հովիւ մը կ՛արածէ իր ոչխարները զանազան ածուներու մէջը, թէ՛ զանազան ու սննդարար բոյսեր կերակրելու իր ոչխարներուն, ու թէ՛ ծանօթացնելու իր ոչխարները ուրիշ ոչխարներու և յարաբերութիւն մշակելու իր եղբայր հովիւներու հետ:

Առաքելական շրջանի հաւատացեալները, որպէս լուսաւորումի աւետարանական արշաւ, չունեցան ազգային կամ յարանուանական սահմանումներ, այլ լայնախոհութեամբ ու մեծահոգի մարդասիրութեամբ հաղորդուեցան իրարու հետ: Եկէ՛ք ուրեմն միասնաբար, լայնախոհ մօտեցումով և նուիրումի ճանապարհով, մեր առաջ

դրուած հրամայական գործերը տանինք պատուով, միասնական ու ամբողջատեսական գործելակերպով և միշտ առաջնորդուած մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խօսքով.

«Ձեր իրար սիրելո՛վ է որ մարդիկ պիտի գիտնան, թէ դուք իմ աշակերտներս էք»--Յով. ԺԳ.35:

Երկնային տեսիլք ունեցող հովիւներուն շարժառիթը և հիմը, իրենց ոչխարները արածո՛ղ, ըլլալ է Յիսուս Քրիստոսի սիրով՝ լայնախոհութեամբ և փոխադարձ հանդուրժողութեամբ:

Հովիւ մը որո՞նց հովուելու և արածելու է, ան հովուելու է թէ՛ Գառնուկները և թէ՛ ոչխարները:

Պատանիներն ու երիտասարդները հարստացնելու է ներքնապէս և հոգեպէս, վկայելով անոնց ի՛ր փորձառական ապրումի զօրոյթը և գիտակցութեան հրաւիրելու է իրենց արեան մէջ հոսող ազգային և հոգեւոր մղումները: Պատանին կամաց-կամաց կը հեռանայ մանուկներու խաղէն և կը դառնայ երազուն, երեւակայող և խորհող:

1. Կ՛արթննան անոր ցարդ անհետաքրքիր զգայարանքները:
2. Արժանապատուութեան զգացումը զգալի կը դառնայ:

Մանուկները կը ստանան հովիւին շոյանքը, իսկ պատանիները կ՛ակնկալեն անոր բաջալերանքը: Պատանիները զԱստուած կը տեսնեն իրենց ծնողաց կեանքին և ապրումին ընդմէջէն: Մեր զաւակները ու պատանիները մեր կեանքի նպատակն են, ոգին ու լոյսը:

1. Կրօնքն ու բարոյագիտութիւը դպրոցներէն դուրս վտարած են այսօր, միայն գիտութիւն կ՛ուզեն սորվեցնել Արեւմտեան երկիրներու մէջ:

2. Աստուած երբ դուրս վտարուի դպրոցներէն, բարոյագիտութիւնն ալ կը հեռանայ այդ տեղէն:

3. Այս է պատճառը ներկայ պատանիներու և անչափահասներու ոճիրներուն և անբարոյականութեան:

Կրօնքն ու բարոյագիտութիւնը դպրոցներէ դուրս վտարուելով որքա՞ն յաւելեալ պատասխանատուութիւն բեռցուեցաւ Եկեղեցւոյ վրայ: Եկեղեցին որքանո՞վ և ինչպէ՞ս ստանձնած է սոյն պատասխանատուութիւնը:

Կիրակնօրեայ Վարժարանները հոգեւոր սնուցարաններն են մեր ազգին զաւակներուն: Կիրակնօրեայ վարժարաններ, որոնք 1930-ին հաստատուեցան երջանկայիշատակ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսի սրբատառ կոնդակով ու շեշտուեցաւ կարեւորութիւնը սոյն Վարժարաններու դերակատարութեան:

Ինչո՞վ և ի՞նչպէս կը տարբերի Յիսուսի կրօնական բարոզութիւնը Իր մրցակից Փարիսեցիներու դաստիարակութենէն:

Փարիսեցիք ու հրեայ բահանաներ կը սորվեցնէին ազգային և

Մովսիսական Օրէնքին աւանդութիւնները, իսկ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, նոր պատկերացում մը բերաւ կրօնքի և հաւատքի անդաստանին և աստուածաճանաչումին:

Յիսուս խօսեցաւ ու բարոզեց առակներով: Առակը պատկերաւոր ձեւով ըսուած խօսք կամ պատմութիւն է: Առակները հայելիներու կը նմանին, ուր անձ մը ինքզինք կը տեսնէ: Առակներով խօսիլը ժողովրդական կերպ մըն է, ուսուցանելու համար շատ ազդու, որ Քրիստոս լայնօրէն օգտագործեց՝ հոգեւոր ճշմարտութիւններ փոխանցելու համար: Առակը, առաջնակարգ միջազգային գրականութիւնն է: Անիկա կը պատկանի բոլոր ժամանակներուն և կը խօսի բոլոր ժողովուրդներուն նոյն լեզուով: Բացարձակութիւն թիւն մըն է Յիսուս՝ ուսուցողական իր այս հրաշալի պայծառատեսութեան մէջ, Իր այս ինքնատիպ կատարելութեան մէջ:

Յիսուսի առակները մարդուն կը յայտնեն իր մէջ հարազատը՝ Աստուածայինը: Յիսուսի հմայագեղ առակները պատկերացումներն են իր հայրենի հողին և բնութեան սիրոյն: Ան դիտեց և ուշադրութիւն դարձուց աղբատին ու հարուստին, հրեային ու հեթանոսին որոնք բալեցին Հրեաստանի ճամբաները:

Արեւմտեան աշխարհի ուժազդեցիկ գաղափարականները կու գան Յիսուսի առակներէն: Առակներու բոլոր մեծ պատկերացումները բողոքի կոթողներ են ընդդէմ անարդարութեան, բռնակալութեան ու հոգեկան ստրկութեան:

Քրիստոսի առակները, արուեստի բոլոր մարզերուն մէջ, դարձած են բանաստեղծութիւն, բանդակ, իմաստասիրութիւն կամ նկարչութիւն, գրականութիւն կամ գեղարուեստ: Եկեղեցւոյ հովիւը իրարու հետ հաշտեցնելու է երեւելին և աներեւոյթը, իրականութիւնը և գաղափարը, ճշմարիտը և գեղեցիկը ու ժամանակաւորն ու յաւերժականը:

Դժուար է հոգեւոր հովիւը անչատել իր հովուութենէն:

Բարի Հովիւը կ՛երջանկացնէ բոլոր յոգնածները, կը յագեցնէ բոլոր հոգեկան ծարաւները: Ոգեկան հաց կը դառնայ բոլոր զԱստուած սիրողներուն, բայց ափսոս, Ինք կը մնայ առանձինն և անյագուրդ: Այսպէս եղած է միշտ բարոզիչ հովիւներու ճակատագիրը: Քրիստոնեան միշտ կու տայ: Կու տայ երազները, յոյսերը և ինչ որ յաւերժական է ու բարի:

Աննուաճելի մեծութիւնը, ո՛չ հանճարեղ գիտունն է, ո՛չ ներհուն մտաւորականը, ո՛չ շնորհազարդ արուեստագէտը, ո՛չ դափնեկիր բերթողը, ո՛չ ամենազօր աշխարհակալը և ո՛չ ալ ոսկեկշիռ միլիոնատէրը: Կեանքի մէջ իսկական մեծութիւնը՝ այն բաջ հովիւն է, որուն սիրտը կը գործէ գթութեան և զոհողութեան բաբախումներով:

Փետրուար 10, 2000
Թորոնթօ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉ ԵՂԻԱ

Յովհաննէս Մկրտիչ առաջինը եղաւ Յիսուսի մէջ աստուածայինը նշմարող մարգարէն:

1. Յովհաննէս Մկրտիչի բարոզչութիւնը անապատին մէջն էր, ժողովուրդը անոր կերթար: Յիսուս Քրիստոսի բարոզչութիւնը բաղաքներու, գիւղերու և տաճարին մէջն էր: Յիսուս ժողովուրդին գնաց:

2. Յովհաննէս Մկրտիչ վախի և սարսափի Հին Կտակարանին բարոզիչ էր.

«Իժերու ծնունդներ, ո՞վ սորվեցուց ձեզի փախչիլ վերահաս բարկութենէն»--Մատթ. Գ.7, Ղուկ. Գ.7:

3. Յովհաննէս Մկրտիչ կը վկայէ փարեսեցիներու հարցումին «ես չեմ»ով. Իսկ Յիսուս «ես եմ»ով--Յով. Ա.19-20:

«Մովսէսի Օրէնքը և մարգարէներու ուսուցումները մինչեւ Յովհաննէս իզօրու էին. անկէ յետոյ կը բարոզուի Աստուծոյ արքայութիւնը»--Յիսուս --Ղուկ. ԺԶ.16:

«Վստահ եղէք, թէ մարդոց մէջ Յովհաննէս Մկրտիչէն մեծը չէ ծնած սակայն երկինքի արքայութեան մէջ հետին եղողը Յովհաննէսէն աւելիմեծ է: Յովհաննէս Մկրտիչի բարոզութեան օրերէն մինչեւ այսօր մարդիկ երկինքի արքայութիւնը ձեռք ձգելու համար ոյժ կը բանեցնեն, և զօրաւորները ձեռք կը ցգեն զայն: Մովսէսի Օրէնքը և բոլոր մարգարէները մինչեւ Յովհաննէսի ժամանակը մարգարէացան երկինքի արքայութեան մասին և եթէ կ՛ուզէք ընդունիլ՝ Յովհաննէսն է եղիան որ պիտի գար: Ականջ ունեցողը թող լսէ:--Մատթ. ԺԱ.11-14

Օրէնքն ու մարգարէները գոյութիւն պիտի ունենայ, բայց ոչ գործադրութեան համար:

«Եկաւ Յովհաննէս. ոչ կ՛ուտէր և ոչ կը խմէր (ուրիշներու հետ) **և ըսին. «Դեւ կայ անոր մէջ». Եկաւ մարդու Որդին, կ՛ուտէ և կը խմէ, և կ՛ըսեն. «Ահա ուտող և խմող մարդ մը, բարեկամ՝ մաքսաւորներու և մեղաւորներու»**--Մատթ. ԺԱ.18-19:

1. Եւ եթէ կ՛ուզէք ընդունիլ. «Ա՛ն է եղիան, որ պիտի գար» --Մատթ. ԺԱ.14: ("Եղիա" կը նշանակէ՝ Եհովա իմ Աստուածս է)

Եղիա Իսրայէլի արտադրած անճնատրութիւններէն նկարագրով ամէնէն երեւելի և ամէնէն վիպական անճն է, և մեծագոյն մարգարէներու կարգին կը դասուի: Կենսագրական միակ ծանօթութիւնը զոր ունինք իր մասին՝ այս է..

«Գաղաադու բնակիչներէն Թեղբացի Եղիա»--Գ. Թագ. ԺԷ.1--Ն.Ք. 897:

Եղիայի հազուադէպ ու կայծակի պէս երեւումները, իր անվեհեր բաջութիւնը.

«Ջօրաց Տէր Աստուծոյն համար իր նախապաշարուած մեծ նախանճատրութիւնը»--Գ. Թագ. ԺԹ.10, 14:

Իր փառատր յաղթանակները՝ և անոնց հետեւող իր հոգեյոյզ սրտաբեկումները, փառոյ երկինք յափշտակութիւնը, ու վերջապէս այլակերպութեան լեռան վրայ անոր խաղաղ ու գեղեցիկ երեւումը, անոր աղօթողի իբր օրինակ մը տրուած ըլլալ--Յակ. Ե.17-18 եզակի դէմք մը դարճուցած էին զայն հրեաներուն համար:

Սոյն պատճառաւ, Պայծառակերպութեան լեռան վրայ Մովսէս և Եղիա երեւցան Յիսուսի երեք աշակերտներուն՝ Պետրոսի, Յովհաննէսի և Յակոբոսի: Յիսուս իր Պայծառակերպութեամբ և Հօր Աստուծոյ լսելի ճայնով ջանաց այս երեք աշակերտներուն ցոյց տալ, թէ Մովսէս ու Եղիա մարգարէներուն հետ չփոթելու չեն Ջինք՝ երկնաւոր Աստուածորդին Փրկիչը աշխարհի:

Երկնալսելի Ջայնը ըսաւ աշակերտներուն.

« Այս է իմ սիրելի Որդիս, որուն հաճեցայ.
Անո՛ր մտիկ ըրէք»--Մատթ. ԺԷ.5,

որոնք պիտի դառնային Աստուածոյ Թագաւորութեան առաքեալները: Հրեաներու հոգեկան ենթահողին մէջ Մովսէս և Եղիա մարգարէները հերոսական ու վիպային անճնատրութիւններ էին:

Յիսուս ջանաց այդ սխալ գաղափարը հեռացնել աշակերտներուն միտքէն երբ Իր հեղինակատր արտայայտութեամբ զանոնք (Յովհաննէսն ու Յակոբոսը) յանդիմանեց ըսելով.

«Չէ՛ք գիտեր թէ ի՛նչ տեսակ հոգիի կը պատկանիք»:
-- Ղուկ. Թ.54:

Յիսուս Քրիստոս Իր աստուածայայտ Աւետարանով կը վերջացնէ հրեայ մարգարէներու մարդասպան նախապաշարումները, և ի յայտ կը բերէ Իր ներո՛ւմ շնորհող գթութեան և սիրոյ հոգին երբ Ան կը ջանայ առաջնորդել աշակերտները Հօր Աստուծոյ սիրավառ և փրկարար Հոգիին:

1. Օրէնքը և մարգարէները մարգարէացան մինչեւ Յովհաննէս: Եւ եթէ կ՛ուզէք ընդունիլ՝ ա՛ն է Եղիան, որ պիտի գայ:

2. «Հապա ինչո՞ւ դպիրները կ՛ըսեն թէ նախ Եղիա պիտի գայ»: Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոնց.

«Եղիա պիտի գայ և ամէն ինչ պիտի վերահաստատէ: Բայց կ՛ըսեմ ձեզի, որ Եղիա արդէն իսկ եկած է, բայց չճանչցան զայն և ինչ որ ուզեցին՝ ըրին անոր»
--Մատթ. ԺԷ.10-12:

3. **«Ան, Եղիայի հոգիով և զօրութեամբ, պիտի երթայ Տիրոջ առջեւէն, որպէսզի հայրերուն սրտերը որդիներուն դարձնէ և անհնազանդները՝ արդարներու իմաստութեան՝ տիրոջ համար պատրաստ ժողովուրդ մը կազմելու»**--Մարկ. Ջ.15:

4. Հերովդէս չորրորդապետ լսեց այս բոլոր գործերը և կը զարմանար ոմանց ըսածին վրայ թէ՝ Յովհաննէս մեռելներէն յարուցեալ է, իսկ ոմանց ըսածին վրայ թէ՝ Եղիա յայտնուէր է, և ուրիշներուն ըսածին թէ՝ նախկին մարգարէներէն մէկը յարուցեալ է--Ղուկ. Թ.7-8»

5. Յիսուս հարցուց Իր աշակերտներուն ու ըսաւ.
«Ժողովուրդը իմ մասիս ի՞նչ կ՛ըսէ, ո՞վ եմ ես»:
Եւ անոնք պատասխանեցին. «Յովհաննէս Մկրտիչը. եւ ուրիշներ թէ՝ Եղիան, իսկ ուրիշներ թէ՝ նախկին մարգարէ մը, որ յարուցեալ է»--Ղուկ. Թ.19:

6. Յիսուս բարձր ձայնով գոչեց ու ըսաւ.
«Էլի՛, Էլի՛, լա՞մա սաբաքթանի»,
այսինքն՝ Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ինչո՞ւ թողուցիր զիս:
Այնտեղ կեցողներէն ոմանք, երբ լսեցին՝ ըսին.
«Անիկա Եղիան կը կանչէ»: Եւ անոնցմէ մէկը իսկոյն վազեց բացախով թաթխուած սպունգ մը առաւ և եղէգի մը ծայրը անցնելով՝ տուաւ անոր որ խմէ: Իսկ ուրիշներ կ՛ըսէին.
«Թո՛ղ տուր, տեսնենք թէ Եղիան կու գա՞յ զայն փրկելու»
--Մատթ. ԻԷ.46.49:

7. Յովհաննէս Մկրտիչին հարցուցին դուն ո՞վ ես, Եղիա՞ն ես: Եւ ան ըսաւ, ո՛չ, չեմ: Իսկ դուն մարգարէ՞ն ես: Ան պատասխանեց՝ ո՛չ: Ուրեմն, ըսէ՝ մեզի՝ դուն ո՞վ ես, որպէսզի պատասխան տանինք անոնց, որ մեզ ղրկեցին: Ի՞նչ կ՛ըսես քու մասիդ: Ան ըսաւ.

«Ես անապատին մէջ կանչողին ձայնն եմ, ճարթեցէ՛ք Տիրոջ ճանապարհը, ինչպէս ըսաւ Եսայի մարգարէն»--Յով.Ա.21-23:

8. «Ինչպէս որ մարդոց համար սահմանուած է մէ՛կ անգամ մեռնիլ և այնուհետեւ դատաստան ընդունիլ»--Եբր. Թ.27:

9. «Ռա՛բբի, մեղքը որո՞ւնն է, ասո՞ր թէ իր հօրն ու մօրը, որ ան կոյր ծնած է»--Յով. Թ.1-4:

ա. «Այն օրերը մէյմըն ալ պիտի չըսեն, Հայրերը ազոխ կերան, ու որդիներուն ակռաները առին, հապա ամէն մարդ իր անօրէնութեանը համար պիտի մեռնի»--Երեմ. ԼԱ.29-30:

բ. «Անիկա իր հօրը անօրէնութեանը համար պիտի չմեռնի» --Եզէկ. ԺԸ.17:

10. Եթէ մարդ արարած վերամարմնացումո՛վ պիտի մաքրուի իր սխալներէն ու թերութիւններէն մինչեւ սրբանալը, ինչո՞ւ Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ յայտնելու Հօր Աստուծոյ սէրը և մեղքերու թողութիւնը:

ա. Վերամարմնացումի վարդապետութեան մէջ, ո՞ւր կը տեսնուի Աստուծոյ դերը, միջամտութիւնը և սէրը հանդէպ մարդկութեան:

բ. Եթէ վերամարմնացումի վարդապետութեամբ, մարդ արարած ի՛նք պիտի սրբանայ, ի՛նք պիտի կարենայ ֆաւել իր մեղքը և ի՛նք իր սրբացութեամբ պիտի արժանանայ յաւիտենական երանութեան, մարդ կարիքը չունի Աստուծոյ և Փրկիչի մը, ո՛չ Յիսուս Քրիստոսի գալը անհրաժեշտ էր և ո՛չ ալ Անոր խաչելութիւնը:

Հոկտեմբեր 1, 2001
Թորոնթօ